ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/1-Լ) ծածկագրով գնումների էլեկտրոնային (Armeps) համակարգի միջոցով գնաշնման հարման ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.02.2019 թվականի թիվ 66/1-Ա հրամանով ձևավորված գանահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.03.2019 թ. ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Դուրգարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ. Կարապետյանը, Լ. Դեմիրչյանը, Ջ. Բաբայանը, Ս. Սարգսյանը, , քարտուղար Լ. Հարությունյանը, «Դիգենպրոֆ» ՍՊԸ-ի տնօրեն Վազգեն Ղազարյանը, «Սպեցմաշ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Զարուհի Խաչիկյանը, ԱՁ Գրիգոր Այվազյանի ներկայացուցիչ Խաչիկ Այվազյանը և «Էներգովեստ» ՍՊԸ-ի տնօրեն Արարատ Խոնդկարյանը:

<u>Գների նվազեցման նպատակով բանակցությունների անցկացման մասին</u>

ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/1-Լ) ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մ. Դուրգարյանը տեղեկացրեց, որ հանձնաժողովը ՀՀ-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-(19/1-Լ) ծածկագրով գնման հրավերի 7.7 կետի համաձայն գնանշման հարցման ընթացակարգի համար գների նվազեցման նպատակով բանակցությոններին մասնակցելու համար գնային առաջարկ ներկայացրած և հրավերի պահանջների նկատմամբ ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին 26.02.2019թ. Armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով հրավիրել էր 05.03.2019 թ. 11:00-ին մասնակցելու բանակցություններին:

05.03.2019 թ. 11:00-ի դրությամբ բանակցություններին մասնակցում էին «Դիգենպրոֆ» ՍՊԸ-ի տնօրեն Վազգեն Ղազարյանը, «Սպեցմաշ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Զարուհի Խաչիկյանը, ԱՁ Գրիգոր Այվազյանի ներկայացուցիչ Խաչիկ Այվազյանը և «Էներգովեստ» ՍՊԸ-ի տնօրեն Արարատ Խոնդկարյանը:

Գնահատող հանձնաժողովը բանակցությունների համար մասնակիցներին տրամադրեց 20 րոպե: Մասնակիցները իրենց ներկայացրած գները թողեցին անփոփոխ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ԱՁ Գրիգոր Այվազյանին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

2. «Սպեցմաշ» ՍՊԸ-Ին ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

3. «Էներգովեստ» ՍՊԸ-ին ճանաչել երրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

4. «Դիգենպրոֆ» ՍՊԸ-ին ճանաչել չորրորդ տեղը զբաղեցրած մասնակից:

5. «Ռեդինետ» ՓԲԸ-ին ճանաչել հինգերորդ տեղը զբաղեցրած մասնակից:

6. Սահմանված կարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտե էլեկտրոնային հարցում ներկայացնել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

7. Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերահիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Մ. Դուրգարյան

անդամներ՝ _____ Մ. Կարապետյան

_____ Լ. Դեմիրչյան

_____ Ջ. Բաբայան

_____ Ս. Սարգսյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան